


ԶԵՐԲԱԶԱՏՈՒՄ



բբ հոգիներն այժմ՝ առասպելական
խորութեան մը մէջ՝ յուսահասութեամբ
ընկդմին մեր շուրջ,
եւ աշնանային անհանգստութեան մը դաշտանըկարն
իր տըրոփիւնին, տեսնդահարումին
մէջ պարփակէ մեզ . . .

Դիտեմ. որ մեր մէջ ու մեզմով զեղուն,
պիտի բարձրանան բիւրաւոր ճայներ —
դաշտանըկարի սարսրուսիներուն
եւ ընդհանրական քափահարումի
բորբ ոիքմերուն հետ . . .

Մե՛ն, տառապեցանի կեանեով մ'ահաւոր . . .
Մեր ուզեղին մէջ վառեց պատզամն իր
Հիւսիֆերն ահեղ . . .
Մե՛ն՝ տառապեցանի կեանեով մ'ահաւոր
Եւ հովերու մեծ շաշումին յանձնած,
Եւ երկարէ խուլ շարժերու, հոգին մեր յաղքահարեալ :

Ո՞վ Գլուխիա,
կայմերը բաց են . . . կայմերն ըսպիտակ
ներկայի տեսնդին . . .
Բանաստեղծութիւնն է այստեղ ներկայ . . .

Քաղաքներէն բող ծըլսաննե՛ր անցնին
ու տարերքէն մուր,
հոգեկան խեղդուած աշխարհներէն մեր —
Օ՛, պիտի այլեւս տեսնդահար հոգին մեր ձերբազանեն :
Ու փոշեթարաւ մեր ոտքերն անշեղ,
իրականութեան այս ապառաժին
իրենց վերջին, մե՛ծ զըրոհն արձակեն . . .

Բայց, լրսէ՛,
վերջին յաղքահարումը ծանր է ու դաժան
իրականութեան այս ապառաժին . . .

Եւ ժաղաքներն այս, այս գետերն անզոյն՝
(որ կը կրծոտեն արդ հիմերն անոնց),
Եւ ծառուղիներն այս
պիտի սարսրոան ու արձագանգեն ներկայութիւնը
փոք-որիկներու։

Եւ մեծ առաւօտն եւ այզն ուշացող՝
կը բաւակի ա'լ հորիզոններէն ...
Արշալոյսի մը ներկայութեանն ենք։

Եւ կ'ըսեմ, — պիտի տեսնահար հոգին մեր վերածընի
հազար զոյներով ու երազներու մեծ զինովութեամբ
զո՞ն ու արնախայտ ...

Ո՞վ Գլուխիա.
կայմերը բա՛ց են, կայմերն ըսպիտակ
ներկայի տեսդին ...
Կապտրւած վազրի նայուածքը հերիք մխըրնես օդին ...
Կայմերը բաց են, կայմերն արշաւին.
Հորիզոնն ի զուր չէ որ կը բացուի ...

Եւ մեր քունիքներուն գարկն աւելի հեշտ կը դառնայ արդէն
նոր արշաւներու լոյսէ աւիշով։

— Ու մետաղներու պաղութեան մէջ այս
Օ՛ տաքութի՛ւնը նայուածքիդ հրզօր՝
աչքերուս մէջ՝ հո՛ւր,
Եւ նոր հունձքերու դաշտ մը տարփային ...:

— Ամբոխներուն հետ, ամբոխներէն վեր
Եւ անստուգութեան բոլոր դոներուն
Եւ աշնանային անհանգըստութեան դաշտերուն վըրայ
պիտի տիրէ Եւ տարածուի՛ ահա'
նառազայքով շեշտ Եւ մե՛ր իսկ կեանիով՝
յեղակարծօրէն՝ շո՛ւմչը յադրութեան։

ԲԻՒԶԱՆԴ ԹՕՓԱԼԵԱՆ